

ՅԻՄՆԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԽՍՆՈՒԱԾ 1906 ԻՆ ԳԱՅԻՐԵ

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1924 ԻՆ ԼՈԶԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ԲԱՐԵ

1934

361

3-25

1 MAR 2010

361
Z-25

ՅԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՅԵՇՈՒԱՇ 1

ՆՊԱՏԱԿ ՀՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Զուիցերիական Քաղաքային Օրէնքին 60-79 Յօդուածներուն տը-
րամագրութեանց համաձայն հիմնուած է Ընկերութիւն մը՝ Հայկա-
կան Բարեգործական Ընդհանուր Միութիւն անունով։

Այս Ընկերակցութիւնը, կազմուած ընկերակցաբար (*corporative-*
me it), պիտի ունենայ իրաւական անձնաւորութիւն (*personnalité ju-*
ridique)։

Անիկա կազմուած է յաջորդելու համար «Հայկական Բարեգոր-
ծական Ընդհանուր Միութիւն» անունը կրող Ընկերութեան, որ 15
Ապրիլ 1906ին հիմնուած էր Գահիրէի մէջ (Եղիպառ), Պօղոս Նու-
ուպար վաշայի նախաձեռնութեամբ և անոր նախագահութեան տակ,
և որ չէր կրցած իրր քաղաքային անձնաւորութիւն (*personnalité ci-*
vile) ճանչուիլ եղիպառական օրէնքներու ներկայ տրամադրութիւն-
ներով։

Այդ Ընկերութիւնը վերջնականապէս լուծուած է։

Հետեւաբար, ներկայ Ընկերակցութիւնը պիտի շարունակէ դոր-
ծը այն Ընկերութեան որուն տեղը կ'անցնի, իր վրայ պիտի առնէ ա-
նոր դոյքն ու պարտքը, միեւնոյն նպատակներով, այսինքն՝

Ա. - Օժանդակել հայ ժողովուրդին եւ իր հայրենիքին մտաւոր
եւ բարոյական զարգացման։

Բ. - Օգնել աննեց նիւթական ու տնտեսական վիճակին բարե-
լաւման։

Գ. - Քաջալերել սոյն արդիւքները յառաջ բերելու ծառայող ա-
մէն ձեռնարկ ու հրատարակութիւն։

Ընկերակցութիւնը մարդասիրական հաստատութիւն մըն է.
ո՛ եւ է քաղաքական կամ առեւտրական հանդամանք չունի։ Այս պայ-
մանը հիմնական է։



63268-67

Բառ ներկայ Հիմնական Կանոնադրին տրամադրութեանց, յա-
նուն Ընկերութեան կնքուած յանձնաւութեանց եւ պարտքերու հո-
մար, Ընկերակցութեան անդամները ու եւ է պատասխանաւութիւն
չեն ստանձներ:

Յօդուած 2

ՀիՄՆԱԴԻՐՆԵՐ, ԿԵԴՐՈՆ, ՏԱՐԵՇԹՁԱՆ

Այս Ընկերակցութեան հիմնադիր անդամներն են Կեդրոնական
Վարչական Ժողովի ներկայ անդամները եւ լուծեալ Ընկերութեան
վերապրոց հիմնադիրները: Ասոնք են՝

Տ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ,	Տ. ՊՕՂՈՍ ԷՍՄԵՐԵԱՆ,
Տ. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,	Տ. ՄԻՔԱՅԵԼ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ,
Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱԼԱԹՈՆ ՊէՅ,	Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,
Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԿԵԱՆ,	Տ. ԱՐԱՄ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ,
Տ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ,	Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ,
Տ. ՍԵՐՈՎԻՔ ՍՎԱՃԵԱՆ,	Տ. Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ,
Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ,	Տ. ԱՌԱԲԵԼ ՊէՅ ՆՈՒՊԱՐ,
Տ. ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ,	Տ. Կ. ՇԵՐԻՏՃԵԱՆ ՊէՅ:
Տ. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԵԱՆ,	

Տարեշթձանը կը սկսի ամէն տարուան Յունիար մէկին:

Յօդուած 3

Ընկերակցութեան Կեդրոնը Լօգան է. ուրիշ տեղ կրնայ փոխա-
րութիւն Ընդհանուր Ժողովին որոշումով:

Ընկերակցութեան Կեդրոնը այժմ կը դանուի Լօգան, Կրտն Շէն
Փողոց թիւ 8, Նոստար Հ. Ս. Պէրֆեկտ գրասենեակը:

Յօդուած 4

Ընկերակցութեան տեւզութիւնը անսահման է:

Յօդուած 5

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՄՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընկերակցութեան անդամ ըլլալու համար պէտք է Կեդրոնական
Վարչական Ժողովին կամ սոսորեւ նախատեսուած Տեղական Մասնա-
ժողովներէն մէկուն խնդրանք ներկայացնել, եւ կամ երկու անդամի
կողմէ ներկայացուիլ: Այդ ժողովը՝ նիստին ներկայ դանուած ան-

դամներու մէծամասնութեամբ՝ կը քուէարկէ ընդունելութիւնը, յե-
տագայ 14րդ և 25րդ յօդուածներուն տրամադրութեանց համաձայն:

Կարող է անդամակցիլ, առանց սեւի եւ գաւանանքի խորութեան,
ամէն Հայ որ յանձն կառնէ յարգել ներկայ Կանոնագիրը եւ կանոնա-
ւորապէս հասուցանել իր անդամավճարը:

Յօդուած 6

ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ ԵՒ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Միութեան ամէն անդամ կը ընդունելութեան ժամանակ պարտա-
ւոր է վճարել մուտքի տուրք մը եւ ամսական անդամավճար մը, ո-
րոնց քանակը ինք պատ է որոշելու: Մակայն ոչ մէկ ատեն մուտքի
տուրքը Զուիցերիական երկու Փրանքէ եւ ամսական անդամավճարը
Զուիցերիական մէկ Փրանքէ պակաս չեն կրնար ըլլալ: Զանազան եր-
կիրներ բնակող անդամներու համար սոյն գումարները պէտք է վե-
րածուին միեւնոյն արժէքը ներկայացնող աեղական դրամներու:

Անդամավճարները վճարելի են ամէն ամիս, եռամսեայ, վեցամ-
սեայ կամ տարեկան, իւրաքանչիւր անդամի փափաքին համաձայն:

Կեդր. Վարչ. Ժողովը կը նայ, բացառարար եւ ըստ պարագայի,
անդամավճարներուն սակը իշեցնել կարգ մը վայրերու մէջ:

Այս անձեռը, որ ընկալեալ սակէն պակաս անդամավճար կը հա-
տուցանեն, պիտի նկատուին Ընկերակցութեան օժանդակ անդամներ:
Այս անդամները ընտրող պիտի ըլլան, բայց ոչ ընտրելի:

Յօդուած 7

ԲԱՐԵԲԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ, ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

ԵՒ ՑԿԱՆՍ ԱՆԴԱՄՆԵՐ

Կեդր. Վարիչ Ժողովը կ'ընծայէ՝

Ա. Բարեբար Անդամի տիտղոսը այն անձերուն՝ որ մէկ անդա-
մէն առնուազն 25000 Զուիցերիական Փրանքի համարժէք նուիրա-
տուութիւն մը կ'ընեն Միութեան.

Բ. Պատուոյ Անդամի տիտղոսը այն անձերուն՝ որ մէկ անդա-
մէն առնուազն 10000 Զուիցերիական Փրանքի համարժէք նուիրա-
տուութիւն մը կ'ընեն.

Գ. Ցկանս Անդամի տիտղոսը այն անձերուն որ մէկ անդա-
մէն առնուազն 5000 Զուիցերիական Փրանքի համարժէք մուտքի

տուրք կը վճարեն կամ նուիրատուութիւն մը կ'ընեն :

Բաց աստի, Կեղր. Վարչ. Ժողովը կրնայ այդ տիտղոսներէն մին կամ միւսը տալ այն անձերուն՝ որ բացառիկ ծառայութիւններ կը մատուցանեն Միութեան : Այս որոշումը օրինաւորապէս կրնայ տըրուիլ՝ միայն, եթէ Կեղր. Վարչ. Ժողովը բազկացնող անդամներուն առնուազն երեք քառորդին կաղմէ ընդունուի :

Լուծեալ Հայկ. Բարեկ. Ընդհ. Միութեան Բարերար և Պատուոյ Անդամները իրաւամբ ներկայ Ընկերակցութեան Բարերար Անդամ եւ Պատուոյ Անդամ են :

ՅՈՒՌԻԱԾ 8

ՎՏԱՐՈՒՄ

Ոեւէ անդամ, երբ անարժան վարժունք մը ունենայ, Ընկերակցութեան անդամներուն ցանկէն կը ջնջուի, Կեղր. Վարչ. Ժողովին կաղմէ՝ նիստին ներկայ գտնուող անդամներուն երկու երրորդին մեծամասնութեան ջուէով, յետապայ 14րդ Յօդուածին մէջ կանխատեսուած պայմաններուն համաձայն :

Եր անդամավճարները կանոնաւորապէս չի հասուցանող ուեւէ անդամ ինքնին կը դադրի Ընկերակցութեան մաս կաղմէլ :

ՅՈՒՌԻԱԾ 9

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՅՑԹՆԵՐԸ

ԿՏԱԿՆԵՐ ԵԽ ՆՈՒԻՐԱՍՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ

Ա.՝ Միութեան հասոյթները կը կաղմէն՝

ա) մուտքի տուրքերը.

բ) անդամավճարները.

գ) կտակները եւ նուիրատուութիւնները.

դ) հանդանակութիւնները.

ե) ուրիշ ամէն հասոյթ որ վերոյիշեալներէն դուրս կը գտնուի :

Այս հասոյթները նախահաշիւին (պիտօնէ) մէջ առանձին դլուխներ կը կաղմէն, իրենց յատկացման ընդհանուր, մասնաւոր կամ արտակարգ բնոյթին համաձայն :

Բ.՝ Ընկերակցութեան եղած նուիրատուութիւնները եւ կտակները երեք տեսակ են՝

ա) Այն նուիրատուութիւնները եւ կտակները դոր նուիրա-

տուներն ու կտակարարները բրած են՝ առանց մասնաւոր պայմաններ զներու գրամագլուխին կամ եկամուտին դործածութեան մասին։ Այս կարգի նուիրատուութիւններն ու կտակները ներկայ Հիմնական Կանոնագրին մէջ կը յորջորդուին «Նուիրատուութիւններ եւ կտակներ առանց մասնաւոր յատկացման» :

Կեղր. Վարչ. Ժողովը կրնայ անոնք բարդի, ամբողջովին կամ մասսամբ, Հիմնական Դրամագլուխին վրայ, առժամկայ կամ մնայուն հիմնադրամներ կաղմէի անոնցմով՝ ձեռնարկներու համար, եւ կամ մայր գումարը ամբողջովին կամ մասսամբ գործածել իր յարմար պատաժ նպատակին :

բ) Այն նուիրատուութիւններն ու կտակները որոնց գրամագլուխին կամ եկամուտին դործածութեան եղանակը որոշած է նուիրատուութիւններուն եւ կտակարարներուն կաղմէ։ Այս նուիրատուութիւնները եւ կտակները կը յորջորդուին «Նուիրատուութիւններ եւ կտակներ մասնաւոր յատկացումներով» :

Սոյն նուիրատուութիւնները եւ կտակները «Հիմնարկութիւն» կը յորջորդուին, երբ անոնց գրամագլուխը անձեռնմխելի հանդամանք ունի՝ նուիրատուութիւններուն եւ կտակարարներուն կամքին համաձայն :

Երբ առոնց մայր-գումարն է որ միանդամ ընդ միշտ պէտք է դործածուի ձեռնարկի մը, անոնք կը յորջորդուին «Սպառելի նուիրատուութիւններ եւ կտակներ» :

Մասնաւոր յատկացումներով կտակներ եւ նուիրատուութիւններ ընող կտակարարներու եւ նուիրատուութիւններու գրած պայմանները պէտք է որ խոհմանորէն յարդուին։ Եթէ, ժամանակի հոլովմամբ, Կեղր. Վարչ. Ժողովը տեսնէ որ նիւթապէս անկարելի է դործածուել գրուած պայմաններէն մէկը, պարտի, պատճառաբանեալ որոշամով մը, անիկա բարեփոխել, ըստ կարելոյն մօտենալով կտակարարին եւ նուիրատուութիւններ :

գ) Այն նուիրատուութիւնները եւ կտակները որոնց համար նուիրատուութիւնները եւ կտակարարները ուեւէ մասնաւոր յատկացում չեն որոշած, գրամագլուխին եւ ոչ ալ եկամուտին համար, բայց որոնց համար, ի փոխարէն, պայման դրած են որ Ընկերակցութիւնը կարգ մը պարտաւորութիւններ ստանձնէ։ Այս նուիրատուութիւնները եւ կտակները կը յորջորդուին «Պարտադիր նուիրատուութիւններ եւ կտակներ» :

Այս պարտադիր նուիրատուութեանց և կտակներու գրամադրութեանը մաս կը կազմէ սեփական զոյքին Բնկերակցութեան՝ որ ըստիպուած է դործադրել իր յանձն առած պարտաւորութիւնները:

Գ. Հասոյթները իրենց յասկացումներուն կը դործածուին բնոշհանուր ծախքերը զեղչուելէ վերջ, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ պատրաստուած նախահաշիւի սահմանին մէջ:

Վարչական Ժողովը յաջորդ տարեցը ջանին կրնայ վտխանցել հասոյթներուն զուտ արդիւնքին մէկ մասը:

Բնկերակցութեան ընդհանուր ծախքերը պիտի հւզացուին հետեւել միջոցներով՝

ա) Հիմնական Դրամագլուխին եկամուտներուն այն մասը որ նախահաշիւով որոշուած է.

բ) մամաւոր գրամագլուխին եկամուտներէն զանձուած վարչական ծախսարաժինը, 10րդ յօդուածին 2րդ հատուածին տրամադրութեանց համաձայն.

գ) նուիրատուներուն և կտակարարներուն կողմէ յատկապէս ծախքերու համար եղած նուիրատուութեանց և կտակներու գրամագլուխին ու եկամուտը.

դ) բոլոր սպասելի նուիրատուութեանց և կտակներու 5%ը.

ե) բոլոր հանդանակութեանց 5%ը.

զ) անդամավճարներու 5/6ին 15%ը, կամ ուրիշ համեմտական սակ մը՝ որ կրնայ բացառար որոշուիլ Կեդր.

Վարչ. Ժողովին կողմէ:

ՅՈՒՇԱԾ

ԲՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒՆԵՐԸ ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱՋՐԱՄ

Բնկերակցութիւնը երեք տեսակ Դրամագլուխ ունի՝ Հիմնական Դրամագլուխ, Մասնաւոր Դրամագլուխ և Սովորական Դրամագլուխ:

Դրամագլուխիները կամ Պահեստները կազմող գումարներու վերածումը, Կեդր. Վարչ. Ժողովին որոշմամբ, պէտք է ըլլան հանրային և պետական արժեթուղթերու, պարտաթուղթերու և ուրիշ առաջնակարգ արժեթուղթերու, կամ, վերջապէս, հասութարեր կալուածներու:

Այն գոյքերը և արժեթուղթերը, որ ստացուած են և վերեւ նա-

խառեսուած դասակարգերուն չեն պատկանիր, կրնան նոյնութեամբ պահուիլ:

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒԾ

Հիմնական Դրամագլուխուն կը բաղկանայ՝

ա) մուտքի տուրքերէ.

բ) այն նուիրատուութիւններէն և կտակներէն՝ որ նուիրատուներուն և կտակարարներուն բացորոշ կամքին համաձայն այս Դրամագլուխին վրայ պէտք է որ բարգուին.

շ) առանց մասնաւոր յատկացումի եղած այն նուիրատուութիւնները և կտակները զոր Կեդր. Վարչ. Ժողովը կը բարգէ այս Դրամագլուխին վրայ:

Կարգուած է Հիմնական դրամագլուխունի պահեստի հիմնադրամը, Հիմնական Դրամագլուխուն կազմող արժեթուղթերուն և անշարժ կալուածներու արժէքի նուազումէն առաջ զալիք վնասը փոխորինելու համար:

ՊԱՀԵՍՏԻ ՀԻՄՆԱԳԼՐԱՄԸ կը գոյանայ՝

ա) անդամավճարներու 1/6ով.

բ) Հիմնական Դրամագլուխի զուտ եկամուտին 10%ով:

Այս բարգումները պիտի զարգին երեւ Պահեստի Հիմնագլրամը հաւասարի Հիմնական Դրամագլուխին մէկ հինգերորդին արժէքին, բայց պիտի վերսկսի ամէն անդամ որ սոյն արժէքը մէկ հինգերորդին վար իջնէ:

Հիմնական Դրամագլուխուն անձեսնմխելի է: Այս պայմանը հիմնական է:

Բ. ՄԱՍՆԱԿՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻՒԾ

Մասնաւոր Դրամագլուխին մաս կը կազմեն՝

ա) մասնաւոր յատկացումներով Նուիրատուութեանց և կտակարարներու գումարը կամ արժէքը՝ ծախքերը զեղչուելէ վերջ.

բ) մասնաւոր հիմնագլրամները, առժամեայ կամ մշտական, զոր Կեդր. Վարչ. Ժողովը ստեղծած է՝ առանց մասնաւոր յատկացումի Նուիրատուութեանց և կտակներու գումարներով:

Նուիրատուութեանց, կտակներու և Հիմնագլրամներու պատկանող արժեթուղթերուն և կալուածներուն արժէքին պատահական

անկումէն առաջ գալիք վնասը փոխարինելու համար, մէն մի կտակ, ինչպէս նաև կեղր . Վարչ . Ժողովին ստեղծած մէն մի հիմնադրամը, պիտի ունենայ Պահեստ մը, որ պիտի կազմուի այդ նույրատուութեանց կտակներուն և Հիմնադրամներուն զուտ և կամուտին 10% ով, եթէ նույրատուները, կտակարարները կամ կեղր . Վարչ . Ժողովը հակառակ պայման չեն դրած :

Եթէ նույրատուներուն և կտակարարներուն կամ կեղր . Վարչական Ժողովին կողմէ հակառակ պայման չէ դրուած, Հիմնադրամնեանց և կեղր . Վարչական Ժողովին ստեղծած Մասնաւոր Հիմնադրամներուն և կամուտներուն 10% ը վար պիտի դրուի վարչական ծախսարաժին անուան տակ և պիտի յատկացուի Բնկերակցութեան ընդհանուր ծախքերուն :

Հիմնական Դրամագլուխի Պահեստին համար նախատեսուած բարգումներուն գաղարաման կամ վերսկաման վերաբերեալ արամադրութեանները կը կերարկուին նաև Մասնաւոր Դրամագլուխի Պահեստին, եթէ նույրատուները կամ կտակարարները կամ կեղր . Վարչ . Ժողովը հակառակ պայման չեն դրած :

Դ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ

Բնկերակցութեան Սովորական Դրամագլուխին մաս կը կազմեն՝
ա) այն Հիմնադրամները որ չեն մտնել Հիմնական Դրամագլուխին կամ Մասնաւոր Դրամագլուխին մէջ:
բ) առանց մասնաւոր յատկացման եղած այն նույրատուութեաններու և կտակներու գումարները զոր կեղր . Վարչ . Ժողովը կ'որոշէ Սովորական Դրամագլուխին վրայ բարդել:
գ) պարտադիր նույրատուութեանները և կտակները:
կեղր . Վարչ . Ժողովը կրնայ Սովորական Դրամագլուխին համար Պահեստի Հիմնադրամ մը ստեղծել ու անոր պայմանները ճշգրուշել:

ՅՈՒՌԱԾ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԳԻՐՆԵՐՈՒ

Ա. — Միութեան Տնօրինութեան Դիւանէն արուած ունէ ստացագիր պէտք է որ կրէ երկու ստորագրութիւն, Պահեստագահին և Վարիչ-Պատուիրակին, և, ի բացակայութեան, անոնց փոխանորդներուն ստորագրութեանները:

Շըջանակային Յանձնաժողովներէն և Տեղական Մասնաժողովներէն արուած ունէ ստացագիր պէտք է նոյնպէս կրէ կրկին ստորա-

ժըրութիւն, սոյն Յանձնաժողովներուն և Մասնաժողովներուն Արտենապետին և Գանձապահին կամ անոնց փոխանորդներուն ստորագրութիւնները:

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՀԱՂԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. — Թղթակցութիւնները և հաղորդագրութիւնները պէտք է ուղղութիւն Տնօրինութեան Դիւանին (տես Յօդուած 13), իսկ Շըջանակային Յանձնաժողովներու և Տեղական Մասնաժողովներու թղթակցութիւնները՝ անոնց Ատենապետներուն :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՃՈՂՈՎ

ՅՈՒՌԱԾ

ԿԱՂՋՈՒԹԻՒՆ, ԲՆՏՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐՈԳՈՒՄ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՃՈՂՈՎԻ

ԵՒ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԵՐՈՒ ՀԵՏ

Ա. — Կեղր . Վարչ . Ժողովը կը բաղկանայ առնուազն ինը և առանական տասնեւհինդ անդամներէ : Առաջին կեղր . Ժողովը կազմըւած է հետեւեալ կերպով .

Տ. ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ,	Տ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ,
Տ. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ,	Տ. ՄԻՔՐԱՅԻԼ ՊԱՊԱԶԱՆԵԱՆ,
Տ. ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՈՆ ՊԵՅ	Տ. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,
Տ. ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԿԵԿԵԱՆ,	Տ. ԱՐԱՄ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ,
Տ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ,	Տ. ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ,
Տ. ՍԵՐՈՎԲԵ ՍՎԱՃԵԱՆ,	Տ. ԶԱՐԵԿ ՊԵՅ ՆՈՒՊԱՐ :

Կեղր . Վարչ . Ժողովին անդամներուն պաշտօնը անվճար է :

Բաց աստի, կեղր . Վարչ . Ժողովին մէջ, Ամերիկայի և Եգիպտոսի Շըջանակային Յանձնաժողովներուն իրաքանչիւրը կ'ունենայ մնայուն աթոռ մը, զոր կրնայ գրաւել անձնապէս Յանձնաժողովին Ատենապետը, Փոխ-Ատենապետներէն մին կամ Պահեստագահը :

Սոյն երկու Յանձնաժողովներու միւս անդամները իրաւունք ունին անձնամբ ներկայ գանուելու կեղր . Վարչ . Ժողովի նիստերուն, խորհրդագական ճայնով :

Բ. — Կեդր. Վարչ. Ժողովի նորոգումը տեղի կ'ունենայ երեք տարին անդամ մը, մասնակի կերպով, յատենի Ընդհանուր ժողովի, և այսպիսի եղանակով մը որ ամբողջական նորոգումը ինը տարուան մէջ լրանայ:

Անդամներու դադարման ոոյն կարգը առաջին շրջանին համար վիճակաւ կ'որոշուի, և յետոյ հոնութեան կարգաւ կը շարունակուի: Դադարեալ անդամները վերընտրելի են միշտ:

Առուագաղն 5 Զուիցերիական ֆրանք կամ համարժէք տմսավճար հասուցանող անդամները միայն կը նաև կեղբոնական Վարչական ժողովին անդամակցիլ:

Գ. — Երբ Կեդր. Վարչ. Ժողովի անդամներուն թիւը 15 էն պահան է, ժողովը կրնայ առժամապէս նոր անդամներ ընտրել, պայտմանաւ որ որոշեալ թիւը չանցնի:

Ընդհանուր ժողովը, ոոյն ընտրութեանց յաջորդող առաջին գումարմանը մէջ, անոնք կը վաւերացնէ և կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնականապէս:

Դ. — Ուեէ պատճառով պակսած անդամի մը տեղ ընտրուող անդամ մը կը պաշտօնավարէ մինչեւ այն ատեն՝ ուր պիտի լրանար իր փոխանակալին պաշտօնը:

Այն պարագային երբ ժողովին անդամներուն թիւը յօդուած 12ով նախատեսուած 15 թիւէն պակաս ըլլալով՝ նոր անդամի մը ընտրութիւն կատարուի, այս վերջնոյն պաշտօնավարութիւնը կը լրանայ ընթացիկ եռամեայ շրջանին վերջը:

Ատենազրութիւնները կը ստորագրուին նիստին ատենապետող անդամին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի մը կողմէ:

Ատենազրութիւններէն ի հարկին տրուելիք ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ Կեդր. Վարչ. Ժողովին Ատենապետին կամ փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

Ե. — Ընկերակցութիւնը երրորդներու հանդէպ ըստ օրինի պարտասորուած եւ ներկայացուած կ'ըլլայ երբ միասին կը ստորագրեն հետեւեալ երեք անձերը՝ ժողովին Ատենապետը կամ Փոխ-Ատենապետներէն մին, Գանձապահը եւ Վարիչ-Պատուիրակը:

Սակայն եւ այնպէս, ուեէ չք, դրամական փոխանցումի կամ գանձումի կամ արժեթուղթերու վաճառման ո եւ է հրաման, պայտմանաւ որ քառասուն հազար Զուիցերիական ֆրանքի գումար մը կամ արժէք մը չանցնի, կրնայ վաւերականորէն ստորագրուիլ հաւաքար Գանձապահին եւ Վարիչ-Պատուիրակին կամ իրենց փոխանորդներուն կողմէ:

Ամէն յանձնառապիր եւ պայմանագրութիւն կրնայ նաեւ վաւերականորէն ստորագրուիլ կերպոնական Վարչական ժողովին յասկարից նշանակուած մէկ կամ աւելի պատուիրակներու կամ փոխանորդներու կողմէ: Այդ պարագային, ժողովին ատենազրութեան վաւերացեալ պատճէնը պէտք է որ վերոգրեալ յանձնառապիրներուն կամ պայմանագրութեանց կցուի կամ շահագրգուռող կողմէրուն հազորդուի:

Յօնուած 13

Գիիշնի կլաջՄՈՒԹԻՒՆ

Կեդր. Վարչ. Ժողովը երեք տարուան համար իր անդամներուն մէջն կ'ընտրէ Ատենապետ մը, երեք Փոխ-Ատենապետներ եւ Գանձապահ մը:

Լուծեալ Հ. Բ. Ը. Միւթեան կերպոնական ժողովին Ատենապետը Ն. Վ. Պօլսո նուպար Փաշա ներկայ Ընկերակցութեան Կեդր. Վարչ. Ժողովին ցկեանս Ատենապետը պիտի ըլլայ:

Ժողովը կը ստեղծէ և կը կազմակերպէ Միւթեան վարչական եւ ելեմտական ճիւղերուն համար Տնօրէնութիւն մը՝ Տնօրէնութիւն Դիւան՝ անոր գլուխը զնելով Վարիչ-Պատուիրակ մը՝ Կեդր. Վարչ. Ժողովին անդամներուն մէջն կամ գուրսէն ընտրուած: Վարիչ-Պատուիրակը, ինչպէս եւ Տնօրէնութիւն Դիւանի պաշտօնեաները վճարեալ են:

Վարիչ-Պատուիրակը կը վարէ նաեւ Միւթեան Ընդհ. Քարտուղարի պաշտօնը:

Կեդր. Վարչ. Ժողովը իր իրաւասութեանց մէկ մասը կը յանձնէ վարչական եւ ելեմտական ճիւղերու Տնօրէնութիւն, նոյն Տնօրէնութիւն Ներքին կանոնագրին նախատեսած սահմաններուն մէջ:

Յօնուած 14

ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐ ԿԵԴՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԵԽ ԽՈՐՀՈՒԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. — Կեդր. Վարչ. Ժողովը կը գումարուի ամէն անդամ որ Միւթեան շահերը կը պահանջնի: Գումարումները տեղի կ'ունենան Ատենապետին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ-Ատենապետներէն մէկուն եւ կամ Վարիչ-Պատուիրակին հրաւերով:

Բ. մողովը կը գումարուի երբ առ նուազն երեք անդամներ պահանջեն :

Բացակայ վարիչ անդամները կրնան իրենց ձայնը տալ ժողովին մէկ ուրիշ անդամին :

Գ. Որպէսզի որևէ գումարման մէջ տրուած որոշումները օրինական համարուին, պէտք է որ ժողովին անդամներուն խակալան թիւին գոնէ կէսը ներկայ կամ ներկայացուած ըլլայ: Առնուազն երեք անդամներու անձամբ ներկայութիւնը անհրաժեշտ է. միւս անդամները կրնան ձայներին իրենց պաշտօնակիցներուն տալ: Ոչ մէկ առեն սակայն անդամ մը իր ձայնէն դատ մէկէ առելի ձայնի իրաւունք կրնայ ունենալ:

Կեդրոնական վարչական ժողովի որոշումները ներկայ կամ ներկայացուած անդամներու ձայներուն մէծամասնութիւմբը կը տրուին: Զայներու հաւասար բաժանման պարագային Ատենապետին ձայնը գերակշու է:

Ըստրութիւններու առեն անհրաժեշտ է ունենալ ժողովը կազմող անդամներուն երկու երրորդի մէծամասնութիւնը:

ՅՈՂՈՒԱԾ 15

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆԵՐԻ

Ա. Կեդր. Վարչ. ժողովը Միութեան վարչութեան եւ գործառնութեանց մասին ամենալայն իրաւասութիւն եւ հեղինակութիւն ունի:

Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն ունի՝

Կատարելու Ընկերակցութեան Յօգուած 1ով սահմանուած նըստապահներուն իրագործման ծառայող ամէն դործ:

Օգնութիւն եւ պաշտպանութիւն ընծայելու ամէն Հայու, առանց դաւանանքի խորութեան, հայազգի գիւղացիներուն նպաստելու, առնոնց հայթայթելով սերմնցու, կենդանի, երկրագործական գործիք եւ մշակելի հողեր:

Սովէ, հրդեհէ կամ ուրիշ ուեւէ աղէտէ եւ համաճարակէ արկածեալ վայրերու բնակիչներուն օգնութեան հասնելու եւ ընդհանրապէս սատարելու ժողովուրդին առողջապահական պայմաններուն բարելաւման:

Գիւղերու մէջ մշակութեան մասին այժմու գործնական գիտելիքները տարածելու, տեղական արհեստագործութեանց վարդացումին նորաստելու, երկրին պայմաններուն համապատասխան եղանա-

կով աշխատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ ստեղծելու:

Հիմնելու կամ նպաստով օժտելու վարժարաններ, մատենադարաններ, ընթերցասաւուններ, արհեստանոցներ, հիւանդանոցներ, վարժամանատուններ, որբանոցներ եւ ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ:

Ընդունելու կամ մերժելու ո եւ է նուիրատուութիւն կամ կտակ:

Ո եւ է գումար գանձելու եւ վճարումներ կամ ծախքեր ընկելու, շաբժուն եւ անշարժ ո եւ է ստացուածքի տիրանալու, ո եւ է արժեթուղթ կամ աւանդ յանձնելու կամ վերստանալու:

Ընկերակցութեան շահուն կամ օգուտին համար ո եւ է շարժուն ու անշարժ կալուած ստանալու կամ ծեռքէ հանելու, ո եւ է փոխանորդագիր յանձնելու կամ ո եւ է փոխհրիտակ (jideicommiss) հաստատելու, իրենց պաշտելով վարչական բոլոր իրաւունքները՝ այդ կերպով մատակարարուած գոյքերը եւ ստացուածքները ետ առնելու կամ ուրիշներու փոխանցելու, ինչպէս նաեւ յիշեալ փոխանորդութեանց եւ փոխհրիտակներուն վերջ տալու:

Ընկերակցութեան անձեռնմխելի հիմնադրամներուն եւ դրամավլուխներուն համար ո եւ է բեկանելի կամ անբեկանելի թրըթկազմելու, պայմանաւ որ այդ հիմնադրամներուն եւ դրամավլուխներուն եկամուտները յանձնանձուին եւ մատակարարուին Ընկերակցութեան կողմէ, Հիմնական կանոնադրին եւ նուիրատուութեան պաշտօնադիրներուն տրամադրութեանց համաձայն:

Իրաւասութիւններու վերոյիշեալ թուումը բացատրիչ է եւ ոչ սահմանիչ, մէկ խօսքով՝ Կեդր. Վարչ. ժողովը ունի բոլոր այն իրաւունքները որ յատկապէս Ընդհ. ժողովին վերապահուած չեն:

Կեդր. Վարչ. ժողովը կարող է իր իրաւասութեանց ամբողջութիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներէն երկուքն թիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անհանախումբերու:

Կամ երեքն բաղկացած մէկ կամ աւելի Յանձնախումբերու:

Բ. Կեդր. Վարչ. ժողովը առաջնակարգ դարմանատուններու մէջ մաղելի պահէ Միութեան բոլոր արժեթուղթերը, ինչպէս նաեւ տրամադրելի ժողովարները:

Գ. Կեդր. Վարչ. ժողովը կը պատրաստէ Ընկերակցութեան տարեկան հաշուեկշիռը եւ Ընդհանուր ժողովին կը մատուցանէ՝ իր պաշտօնավարութեան տեղեկադրին չետ:

Կեդր. Վարչ. ժողովի ո եւ է անդամ կրնայ Շրջանակային Յանձնաժողովներու եւ Շրջանակային Համաժողովներու նիստերուն եկալայ գտնուիլ՝ առանց քուէի իրաւունքի:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԵՐ

ՅՈՒՌԻԱԾ 16

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԵՐԻՆ

Այժմէն իսկ սաեղծուած են երկու շրջանակային բաժանումներ՝
1.՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, 2.՝ Եղիպատու՝ որուն
մաս կը կազմէն Սուրբա, Պաղեստին, Եթովպիա, Հնդկաստան և
Յունաստան։

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ փոփոխութեան ենթարկել ու եւ է
շրջանակային բաժանումներու սահմանները, ինչպէս կրնայ ուրիշ
շրջանակներ ստեղծել նաև այն ամէն տեղերը ուր անդամներուն
և Տեղական Մասնաճիւղերուն թիւը օգտակար կ'ընծայէ այդ բանը,
աշխարհագրական պայմաններն ալ նկատի առնելով։

Այս շրջանակները կազմուելէ վերջ չեն կրնար չնչուիլ կամ տ-
նոնց սահմանները չեն կրնար փոփոխիլ առանց Բնդհանուր Ժողովի
որոշման։

ՅՈՒՌԻԱԾ 17

Իւրաքանչեւր Շրջանակ կը յանձանձուի Շրջանակային Յանձ-
նաժողովի մը կողմէ, ինչպէս սառըեւ բացաբռուած է։

Ամերիկայի Միացեալ Նահանգներու առաջին Շրջանակային
Յանձնաժողովը պիտի կազմուի Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովին
արդի անդամներէն։ Եղիպատուի առաջին Շրջանակային Յանձնաժո-
ղովը պիտի կազմուի Գործադիր Ժողովի արդի անդամներէն։

Կեդր. Վարչ. Ժողովը իր ուղղակի վարչութեան տակ պիտի ու-
նենայ Եւրոպայի Տեղական Մասնաճիւղերը, ինչպէս եւ ուրիշ եր-
կիրներու մէջ գտնուող բոլոր այն Մասնաճիւղերը որոնց անդամնե-
րուն թիւը այժմ բաւական չէ այդ տեղերուն մէջ Շրջանակներ ըս-
տեղծերու համար։

ՅՈՒՌԻԱԾ 18

Շրջանակային Յանձնաժողովները կը բաղկանայ շրջանին բոլոր Մաս-
նաժողովներուն կողմէ ընտրուած պատուիրակներէ։ Իւրաքանչեւր
Մասնաժողովը կ'ընտրէ այնքան պատուիրակ որքան անդամ 50 ան-
դամ ունի իր Մասնաճիւղը, պայմանաւ որ պատուիրակներուն թիւը
հինգը չանցնի։

Կեդր. Վարչ. Ժողովը կ'ընտրէ իր Ատենասպետը եւ իր Դի-
ւանը։ Որոշումները կը տրուին ձայներու մէծամասնութեամբ։

Զայներու բաժանման պարագային՝ Ատենասպետին ձայնը գերակշո-
է։ Ան կ'ընտրէ նաև Շրջանակային Յանձնաժողովին անդամները։

Բացառարար, Եղիպատուի Շրջանակային Յանձնաժողովին անդամ-
ները կ'անուանուին, ինչպէս այժմ, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ։

Կը լոէ Շրջանակային Յանձնաժողովին տեղեկադիրը, կը խոր-
հըրդակցի այն խնդիրներուն մասին որ Կեդր. Վարչ. Ժողովին կող-
մէ իրեն կը յանձնուին եւ ամսոր կ'նեթարկէ այն ամէն առաջարկները

Շրջանակային Յանձնաժողովները իրենց մօտ կը կեդրոնացնեն
իրենց Շրջանակին Մասնաճիւղերուն բոլոր թղթակցութիւնները,
ինչպէս եւ հաշուակալութեան եւ գանձապահութեան վերաբերեալ
բոլոր գործառնութիւնները։ Ուղղակի պատասխանատու են կեդր.
Վարչ. Ժողովին։

Անոնք պարտին ամէն տարի Կեդր. Վարչ. Ժողովին ներկայա-
ցնել մանրամասն տեղեկադիրը մը՝ Միտութեան իրենց շրջանակին
մէջ ունեցած գործունէութեան մասին, անոր կցելով իրենց եւ ի-
րենց Մասնաճիւղերուն հասոյթներու եւ ծախքերու վիճակացոյցնե-
րը, ինչպէս նաև Համաժողովներու եւ Շրջանակային Յանձնաժողո-
վովին եւ Շրջանակին Մասնաճիւղերուն ընտրութեանց եւ անուա-
նումներուն ցուցակները։

Շրջանակային Յանձնաժողովները պարտաւոր են առառաւելն
վեց ամիսը անդամ մը Կեդր. Վարչ. Ժողովին եւ կամ 21րդ Յօդ-
ուածի արամալութեան համաձայն անոր կողմէ կարգուած ել-
մըտական ներկայացուցիչն յանձնել բոլոր հասոյթները, պիտանէով
հախատեսուած ծախքերը զեղչելէ վերջ։

ՅՈՒՌԻԱԾ 19

Ամէն տարի Շրջանակային Համաժողովը մը կը գումարուի, նա-
խորդ տարուան Համաժողովին կողմէ նշանակուած քաղաքի մը մէջ։
Առաջին Համաժողովին դումարուելիք քաղաքը կը նշանակուի Կեդր.
Վարչական Ժողովին կողմէ։

Շրջանակային Համաժողովը կը բաղկանայ շրջանին բոլոր Մաս-
նաժողովներուն կողմէ ընտրուած պատուիրակներէ։ Իւրաքանչեւր
Մասնաժողովը կ'ընտրէ այնքան պատուիրակ որքան անդամ 50 ան-
դամ ունի իր Մասնաճիւղը, պայմանաւ որ պատուիրակներուն թիւը
հինգը չանցնի։

Շրջանակային Համաժողովը կ'ընտրէ իր Ատենասպետը եւ իր Դի-
ւանը։ Որոշումները կը տրուին ձայներու մէծամասնութեամբ։
Զայներու բաժանման պարագային՝ Ատենասպետին ձայնը գերակշո-
է։ Ան կ'ընտրէ նաև Շրջանակային Յանձնաժողովին անդամները։
Բացառարար, Եղիպատուի Շրջանակային Յանձնաժողովին անդամ-
ները կ'անուանուին, ինչպէս այժմ, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ։

Կը լոէ Շրջանակային Յանձնաժողովին տեղեկադիրը, կը խոր-
հըրդակցի այն խնդիրներուն մասին որ Կեդր. Վարչ. Ժողովին կող-
մէ իրեն կը յանձնուին եւ ամսոր կ'նեթարկէ այն ամէն առաջարկները



որ կը սատարեն Հ. Բ. Բ. Միութեան բարգաւաճման՝ իր շրջանակին մէջ:

Շրջանակային Համաժողովը իր շրջանակին համար պիտածէի ծրագիր մը կը պատրաստէ և կը զրկէ Կեդր. Վարչ. Ժողովին՝ ընդհանուր պիտածէի ծրագրին մէջ մտցնելու համար:

Նոր ստեղծուած շրջանակի մը առաջին Յանձնաժողովը կ'ընտրուի Կեդր. Վարչ. Ժողովի կողմէ:

ՅօԴՈՒԱԾ 20

Շրջանակային Յանձնաժողովներու անդամները վերընտրելի են:

ՅօԴՈՒԱԾ 21

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ նշանակել Շրջանակային Յանձնաժողովներու մօտ ելմտական պատուիրակ մը որ պաշտօն պիտի ունենայ տեղեակ պահէլու ինքը Միութեան իր շրջանակին մէջ ունեցած գործունէութեան վերաբերեալ ամէն տեսակ ելմտական խընդիրներու մասին եւ ստանալու Շրջանակային Յանձնաժողովներուն մօտ գտնուած գումարները՝ անոնք յանձնելու համար Միութեան կեդր. սնտուկին:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ անուանել նաեւ մասնաւոր պատուիրակ մը որուն պաշտօնը պիտի ըլլայ աշխատակցիլ Շրջանակային Յանձնաժողովներուն հետ, Միութեան բրոբականակի գործին համար:

Այս երկու պատուիրակները իրաւունք չունին միջամտելու Շրջանակային Յանձնաժողովներուն վարչական խնդիրներուն:

Շրջանակային Յանձնաժողովի անդամիւ եւ ելեւմտական պատուիրակի պաշտօններուն մէջ անհաշութիւն չկայ:

ՅօԴՈՒԱԾ 22

Շրջանակային Համաժողովը կը մշակէ ներքին կանոնադիր մը սահմանելու համար Շրջանակային Յանձնաժողովին եւ Մասնաժողովներու պաշտօնավարութեանց իրաւասութիւնները: Այս ներքին կանոնագիրը, որ պէտք չէ պարունակէ ներկայ կանոնադիրին հակառակ ո եւ է տրամադրութիւն, գործադրութեան կը գրուի՝ Միութեան կեդր. Վարչ. Ժողովին կողմէ վաւերացուելի յետոյ:

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺԻՒՂԵՐ

ՅօԴՈՒԱԾ 23

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

63263-67

Ա.՝ Մասնաժողովը կրնան կազմակերպուիլ Կեդր. Վարչ. Ժողովին կամ Շրջանակային Յանձնաժողովին որոշմամբ ամէն ուր որ Միութիւնը ունի գէթ տասը անդամ:

Կեդր. Վարչ. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իւրաքանչէւր Մասնաժողովի գործունէութեան շրջանակը: Ան ո եւ է ստեն կրնայ ընդպրածակել կամ անձկացնել այս շրջանակը:

Բ.՝ Տեղական Մասնաժողովները կ'ընտրուին այդ շրջանակին ամսական առնուազն Զաւեցերիական Փրանքի համարժէք գումար մը վճարող անդամներէն բաղկացած ժողովէ մը: Այդ ժողովին մէջ իւրաքանչիւր անդամ այնչափ ձայն ունի որչափ Զաւեցերիական 2 Փրանքի համարժէք գումար կը ներկայացնէ իր վճարած ամսարժինը: Եթէ ներկայ անդամներու մէջ ձայներու բացարձակ մէծամասնը: Եթէ ներկայ անդամներու մէջ ձայներու բացարձակ մէծամասնը չի գոյանայ, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի եւ այդ պարագային համեմատական մէծամասնութիւնը բաւական կը նկատուի:

Տեղական Մասնաժողովներու ընտրութիւնը Կեդր. Վարչ. Ժողովին կամ Շրջանակային Յանձնաժողովին վաւերացմանը կ'ենթարկուի:

Այս պարագային որ, ո եւ իցէ պատճառաւ մը, վերեւ յիշատակուած ժողովը կարելի ըլլայ գումարել, Կեդր. Վարչ. Ժողովը կամ Շրջանակային Յանձնաժողովը կրնան լնալու Մասնաժողով մը՝ որ պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ որ կանոնստոր ընտրութիւններ կարելի ըլլայ կատարել:

Բացառարար, Կեդր. Վարչ. Ժողովին եւ Եղիպառոսի Շրջանակային Յանձնաժողովին կեցրոններուն մէջ, Տեղական Մասնաժողովին զովները կ'ընտրուին ամէն տարի Կեդր. Ժողովին եւ Յանձնաժողովին զովները կ'ընտրուին ամէն տարի Կեդր. Վարչ. Ժողովին որոնց կուտան ուղղակի իրենց պաշտօնավարութեան հակառակ որպէս:

Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ սակայն որոշել որ այս Մասնաժողովները ընտրութեամբ անուանուին:

Տեղական Մասնաժողովներու անդամներուն պաշտօնը անվճար է:

ՅՈՂՈՒԱԾ 24

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒԻ ԳԻՒԱՆՆԵՐԻ

Իւրաքանչիւր Մասնաժողովի իր անդամներուն մէջէն ամէն տարի կ'ընտրէ Ատենապետ մը, Ատենապետ մը և գանձապահ մը:

ՅՈՂՈՒԱԾ 25

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒԻ ԽՈՐՀԲԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Կեղլ. Վարչ. Ժողովին խորհրդակցութեանց համար 14րդ Յօդածին մէջ հաստատուած կանոնները նմանապէս զործադրելի են Մասնաժողովներու խորհրդակցութեանց համար:

Մասնաժողովներու առենազրութիւնները՝ նիստին առենապետող անդամին եւ նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ անդամի մը կողմէ կը ստորագրուին: Ատենապետթիւններէ հանուելիք բնորինակութիւնները կամ քաղուածները՝ Ժողովին Ատենապետին կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

ՅՈՂՈՒԱԾ 26

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ

Մասնաժողովները, իրենց շրջանակին սահմաններուն մէջ, Միւթեան նոր անդամ՝ կը գտնեն, կը ջանան անոնց թիւը առելցնել, իրենց տրամադրուած ամէն միջոցներով անոր ծաւարմանը կ'աշխատին, կը գանձեն մուտքի տուրքերը, անդամավճարները և նուիրատրութեանց գոյացումին ջանապետ կ'ըլլան: Ամէն անդամ որ նոր անդամագրութիւններ եւ նուիրատրութիւններ կ'ըլլան՝ նորընտիր անդամներու եւ նուիրատրուներու անունները եւ հասցէնները պարտին ծանուցանել իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին, որ անոնք կը հրատարակէ: Մուտքի տուրքերը, ամսավճարները, ինչպէս նաեւ Զուիցերիական 1000 ֆրանքէն նոււազ եղող նուէրները կը գանձուին Մասնաժողովին Ատենապետին եւ Գանձապահին, իսկ անոնց բացակայութեանը՝ անոնց պաշտօնը առժամարար վարելու համար Մասնաժողովին կողմէ անուանուած երկու անդամներուն ստորագրութիւնը կրող բնկարագիրներու եւ անդորրագիրներու փոխարքէն: Իսկ 1000 Զուիցերիական ֆրանքէ աւելի նուիրատրութիւնները պէտք է ուղղուին կեղը. Վարչ. Ժողովին կամ Շրջանակային Յանձնաժողովներու Գանձապահներուն, նշանակելով աղբիւրը եւ յարակից մանրամասնութիւնները:

Մասնաժողովները, իրենց շրջանակին մէջ, կընան՝ իրենց Հակողութեան եւ պատասխանատուութեան տակ՝ կազմել Օժանդակ Մասնաժողովներ, նաեւ մասնաւոր եւ առժամանակեայ Յանձնախուժրեր, անոնց փոխանցելով իրենց յատուկ իրաւասութիւնները՝ մտամբ կամ ամբողջովին:

Կարող են առաջարկներ ներկայացնել կեղը. Վարչ. Ժողովին կամ իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին, եւ անոնց անդամները կրնան ներկայ գտնուուիլ յիշեալ ժողովներու նիստերուն՝ տանց սակայն քուէի իրաւունքի:

Մասնաժողովները պարտաւոր են կանոնաւոր տոմարակալութիւն մը ունենալ եւ գոյացած դրամները զրկել իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին Գանձապահին:

Իրենց ընդհանուր ծախքերուն համար կրնան գործածել միայն անդամավճարներուն 5 / 6ին 15% լ. այս սակէն տւելի ամէն ծախք պէտք է նախապէս արտօնուուի կեղը. Վարչ. Ժողովին կողմէ, նախահաշիւի սահմաններուն մէջ:

Գ.՝ Իւրաքանչիւր վեցամսեայի վերջը, պարտաւոր են իրենց պատկանած Շրջանակային Յանձնաժողովին զրկել իրենց հաշիւնը անոնց կցելով իրենց շրջանակին վերաբերեալ խորըններու մտին անդեկագիրը մը:

Դ.՝ Պարտաւոր են ամենայն ճշգութեամբ համակերպիլ կեղը. Վարչ. Ժողովին եւ պատկան Շրջ. Յանձնաժողովին որոշումներուն: Յիշեալ ժողովները իրաւունք ունին Մասնաժողովներու անդամները համագութեանը երբ անոնք պարտապանց գտնուին, եւ անոնց տեղ առժամանակաւութիւններ կարգելու, մինչեւ որ վերոգրեալ 23րդ Յօդածին մէջ նշանակուած եղանական ընտրութիւն կատարուի:

ԸՆԴԱԿԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՈՂՈՒԱԾ 27

Ա.՝ Ընդհանուր Ժողովը Միւթեան անդամներուն ընդհանրութիւնը կը ներկայացնէ եւ անոր բոլոր գործանուութեանց վերին հերինակութիւնը անի: Իր որոշումները պարտաւորիչ են ամէնուն, նոյն իսկ բացականերուն եւ տարակարծիքներուն համար:

Բ.՝ Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունին անոնք

միայն, որ տոնուազն մէկ տարիէ ի վեր Միութեան անդամակցած եւ ամսական նուազագոյն 5 Զուլիցերխական Փրանքի համարժէք անդամայնար հատուցած են կանոնաւորապէս:

Իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի այնչափ ձայնի որչափ անդամ իր ամսավճարը կը պարունակէ Զուլցերխական օ Փրանքի համարժէք դռըմարր :

Ի պաշտօնէ Ընդհանուր Ժողովին կը մասնակցին Տեղ. Մասնա-
ժողովներու անդամները, ինչպէս նաև Բարեբար եւ Պատուոյ Ան-
դամները՝ որոնց մասին խօսուած է 7րդ Յօդուածին մէջ: Բացի
այն ձայներէն զոր կրնան ունենալ իրբեւ բաժնեվճար անդամ, Բա-
րեբար Անդամներէն իւրաքանչիւրը 10 ձայնի, իսկ Պատուոյ Ան-
դամներէն իւրաքանչիւրը 4 ձայնի իրաւոնք ունի:

Բնդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցած սրբելանդամ կրնայ իր տեղը ներկայացուցիչ կարգել այդ իրաւունքը ունեցող ուրիշ ուռեւ անդամ մը :

Ներկայացուցիչը իր ձայներէն զատ կ'ունենայ իր փոխանորդ-հալին ձայներն այ:

Սակայն անդամ մը, ոչ մէկ պարագայի մէջ, իր ունեցած ձայներն ալ մէջը ըլլալով, 20 ձայնէ աւելի չի կրնար ունենալ:

Փոխանորդապիքիրներու ստորագրութիւնը պարտի վաւերացւած ըլլալ կամ օրինական ձեւակերպութեամբ, կամ կեդր. Վարչ. Ժողովին կամ Շրջնակային Յանձնաժողովներուն եւ կամ Տեղական Մասնաժողովներուն Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ:

Գ.՝ Ընդհանուր ժողովը կը դումարուի Լօզան կամ այլուր, ըստ Կելքը. Վարչ. Ժողովին որոշման որակարգի խնդիրներուն ամփոփումը պարունակող հրաւիրագրով մը, որ կը հրատարակուի դումարման համար որոշուած օրէն երեք ամիս առաջ, իսկ ստիպողական պարագայի մէջ՝ առնուադն երեսուն օր առաջ:

Դ - Անոր կը նախագահէ կեղր . Վարչ . Ժողովին Ատենապետ , իսկ ասոր բացակայութեան՝ Փոխականապետներէն մին կամ Ատենապետի պաշտօնը կատարող վասիս անուանմա .

Ատենապետը կ'անուանէ Ատենապահոս :

Քուէախոյդ կը նշանակուին ամէնէն աւելի ձայն ունեցող եւ այդ պաշտօնը յանձն առնող երկու անոամբեռ.

Ե - կեղլ. Վարչ. Ժողովին կողմէն պատրաստուած օպակա-

գին մէջ նշանակուած խնդիրներէն՝ զատ՝ ուրիշ նիւթերու վրայ կա-
լելի չէ խորհրդակցիլ:

ԲնդՀանուր Ժողովին ատենազրութիւնները կը ստորագրուին գիւտանի անդամներէն։ Ատենազրութիւններէն հանել պէտք եղած լինդօրինակութիւնները կամ քաղուածները՝ Կեղը. Վարչ. Ժողովի Ատենապետին եւ կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուին։

Զ - Ընդհանուր ժողովը կը դումարսուի ամէն տարի Կեղը . Վարչական ժողովին որոշած թուականին՝

Հսելու համար կեղը . վարչ . ժողովին տեղեկագիրը Ընկերակցութեան կացութեան մասին, եւ ընդունելու համար բոլորուած տարեցրջանին հաշիւները, որ նախապէս՝ ժողովին զումարումէն 15 օր առաջ՝ անդամներու տրամադրութեան տակ դրուած ըլլալու են Միութեան կեղրանին մէջ :

Ներկայացուած հաշիմերը վաւերացնելու կամ ուղղելու համար:

Երբ հարկ ըլլայ՝ վարիչներուն ընտրութիւնները կատարելու համար,

Այսուանելու համար Հաշուեքննիչ մը և Փոխ-Հաշուեքննիչ մը յա-
ջարդ Ընդհ. Փողովին համար տեղեկագիր մը պատրաստելու պաշ-
տօնով, Կեդր. Վարչական Փողովին կողմէ ներկայացուած Հաշուե-
կըցին եւ Հաշիւներուն ճշղութեան եւ Հաշուեզրութեանց ու փաս-
տաթուութերու հետ համաձայնութեան մասին:

Եւ տնօրինութիւններ լնելու համար այն ամէն լնդիրներու մասին՝ որ հբաւիրագրին մէջ նշանակուած օրակարգին մաս կը կաղմէն :

Էւ Վերադրեալ խնդիրներէն զատ, Ընդհանուր Ժողովին անկ է Կանոնագրին վրայ ըլլալիք փոփոխութիւններուն, յաւելումներուն կամ բապաւումներուն մասին ո եւ է որոշում տալ, մասնաւորաբար՝

ա) Բնկերակցութեան նոպատակը կազմող առարկաներէն մէկուն ընդարձակումը, սեղմումը, բարեփոխումը կամ ձեւափոխումը, առանց սակայն ուեւէ պարագայի մէջ փոփոխելու կամ խաթարելու իր ընդհանուր նպատակը եւ իր հիմնական պարմաները (Յօդուած 1 եւ 10) :

բ) Ընկերակցութեան անուան ձեւափոխումը կամ այլափո-
խումը, պայմանաւոր այդ փոփոխութիւնը՝ ընդհանուր նոր
սպառակին կամ հիմնական հանդամանքին ունէ այլայլում
կամ մնաս չի պատճառէ եւ ենթագրել իսկ չի տայ:

գ) Ընկերակցութեան ուեւէ եղանակաւ ձուլումը՝ համանման կամ նոյնատեսակ ուրիշ ընկերակցութեան մը հետ, եւ կամ վերջապէս Ընկերակցութեան կազմալուծումը:

Վերոգրեալ պարագաներուն թուումը լոկ բացատրիչ է եւ ոչ թէ սահմանափակող:

Հ. — Վերեւ ա. թ. գ. հասուածներով թուարկուած պարագաներուն մէջ, ժողովին խորհրդակցութիւնները այն ատեն միայն օրինական կ'ըլլան երբ ներկայ եւ ներկայացուած անդամները՝ Ընդհանուր ժողովին ներկայ գանուելու իրաւունք ունեցող անդամներուն առնուազն կէսը կը կազմէն, եւ որոշումը օրինական ըլլալու համար՝ պէտք է ընդունուի մեծամասնութենէ մը, որ ներկայ եւ ներկայացուած անդամներուն դէթ երեք քառորդը ներկայացնէ: Այսուհանդերձ, եթէ նիստին մէջ Ընդհանուր ժողովին ներկայ դըստուելու իրաւունք ունեցող անդամներուն կէսը ներկայ կամ ներկայացուած չէ, ժողովը կրնայ վերոյիշեալ մեծամասնութեամբ առժամանակայ որոշում մը տալ: Այդ պարագային, նոր Ընդհանուր ժողով մը կը գումարուի՝ երկու շարթուան նուազագոյն ժամանակամիջոցի մը մէջ, ընդունուած առժամակայ որոշումը պարունակող նոր հաւափրով մը. այդ որոշումը վերջնական կ'ըլլայ՝ եթէ նորոգ դումարժան մէջ ներկայ եւ ներկայացուած անդամներուն ձայներուն երեք քառորդին կողմէ ընդունուի, բաւական է որ ժողովին ներկայ դանուելու իրաւունք ունեցող անդամներուն գոնէ մէկ քառորդը այդ նիստին ներկայ կամ ներկայացուած ըլլայ:

Ուրիշ ուեւէ պարագայի մէջ, Ընդհ. ժողովը՝ թէ՛ տարեկան եւ թէ՛ արտակարդ նիստ դումարելուն՝ վաւերական կերպով խորհրդակցած կ'ըլլայ, եթէ ներկայ եւ ներկայացուած անդամներուն թիւը գոնէ մէկ հնդերորդը ըլլայ Ընդհանուր ժողովին ներկայ դըստուելու իրաւունք ունեցող անդամներուն թիւին. իսկ որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ: Եթէ արդ օրինական թիւը չի դոյանայ, երկրորդ նիստ մը կը դումարուի եւ վաւերական կերպով կը խորհրդակցի՝ ինչ որ ալ ըլլայ ներկայ անդամներուն թիւը:

Ընտրութեանց պարագաներուն մէջ, եթէ բացարձակ մեծամասնութիւն չի կայանայ, երկրորդ քուէտրկութիւն մը կը կատարուի եւ այն ատեն համեմատական մեծամասնութիւնը բաւարար կը նըւկատուի:

Թ. — Կեդր. Վարչ. ժողովը պարտաւոր է տարեկան դումարժան

օրակարգը անցընել այն առաջարկութիւնները, որ այս նպատակով իրեն ներկայացուած են հրաւիրապրին հրատարակումէն առաջ՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրաւունք ունեցող եւ գէթ յիսուն ձայնի ամբողջութիւն մը ներկայացնող առնուազն հինգ անդամներու խումբի մը կողմէ:

ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

ՅՈՂՈՒԱԾ 28

Երրոր Ընդհանուր ժողովը կազմալուծման որոշում տայ, ողէտք է նշանակէ այն հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը որ պիտի յաջորդէ Հ. Բ. Միութեան եւ շարունակէ անոր գործերուն վարչութիւնը եւ տնօրինութիւնը, համաձայն Միութեան կանոնագրին մէջ սահմանուած նպատակներուն, ինչպէս նաեւ համաձայն նուիրատուներուն եւ կտակարարներու կամքին՝ Նուիրատութեանց եւ կտակներու վերաբերմամբ:

Այն պարագային ուր կազմալուծումը որոշելու համար ի նիստ հրաւիրուած Ընդհ. ժողովը կարելի ըլլայ օրինապէս գումարուիլ կանոնագրով նախատեսուած պայմաններուն համաձայն, Կեդր. Վարչական ժողովի նախագահը, կամ անոր տեղը բռնող անձը, ի նիստ պիտի հրաւիրէ հետեւեալ անձերէն բաղկացած Յանձնախումբ մը, որ Միութեան կազմալուծումը պիտի որոշէ եւ պիտի նըշանակէ Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը:

Այդ Յանձնախումբը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն՝

ա) Միութեան կեդրուական ժողովին նախագահը՝ կամ Փոխնախագահներէն մին:

բ) եւ գ) Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանակային Յանձնաժողովէն եւ Եղիպտոսի Շրջանակային Յանձնաժողովէն կամ անոնց յաջորդած Մարմիններէն մէյ մէկ պատուիրակի:

գ) Երեւանի Քաղաքային Վարչութեանէն Պատուիրակ մը:

- ե) իջմիածնի վեհ . Ս . Կաթողիկոսէն պատուիրակ մը :
 զ) Կիլիկիոյ վեհ . Ս . Կաթողիկոսէն պատուիրակ մը :
 է) Կ . Պոլսի Հայոց Ամեն . Ս . Պատրիարքէն պատուիրակ մը :
 ը) Երուսաղէմի Հայոց Ամեն . Ս . Պատրիարքէն պատուիրակ մը :
 թ) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայ Բողոքական Եկեղեցիներէն պատուիրակ մը :
 ժ) Վենետիկի Միաթարեան Միաբանութենէն պատուիրակ մը :

Եթէ , ուեւէ պատճառաւ , վերոյիշեալ անձերէն մին , հրաւիրագիրներուն մէջ նշանակուած թուականէն առ առաւելին մէկ ամիս պարմանաժամու մէջ չի կարենայ ներկայանալ կեղծոնական Վարչական Ժողովին կեղրոնատեղին՝ քուէարկութեան մասնակցելու համար , այդ պարագային ներկայ անդամներուն խորհրդակցութիւնը օրինաւոր պիտի նկատուի եւ անոնք պիտի կրնան , ձայներու մէծամասնութեամբ , ընտրելու Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը եւ կամ հաստատութիւնը , կը բաւէ որ առնուազն հինգ անդամ ներկայ ըլլան :

Վերջապէս , այն պարագային ուր յիշեալ Յանձնախումը չի կարենայ գումարուիլ ու եւ է պատճառաւ , կամ , զումարուելէ յիշոյ , չի կարենայ որոշման մը հանդիլ , վերոյիշեալ կաղմակերպութիւններէն կամ անձերէն ու եւ է մէկը իրաւունք պիտի ունենայ Հ . Բ . Բ . Միութեան կաղմալուծման եւ անոր յաջորդելիք հայկական ընկերակցութեան , հաստատութեան կամ կաղմակերպութեան ընտրութեան հարցը ենթարկել Հ . Բ . Բ . Միութեան կեղրոնատեղին եղող Լողանի Դաշնակցային Դատարանին նախադահին կողմէ , եւ այս Դատարանին չգոյութեան պարագային՝ Անդիլոյ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին կողմէ նշանակուած իրաւարարի մը իրաւարութեանը :

Միութիւնը իր Հիմնական Դրամագլուխը եւ իր Մասնաւոր Դրամագլուխներուն մէկ մասը Թրըսթի վերածած ըլլալով , եթէ վերոյիշեալ անձերէն կամ կաղմակերպութիւններէն մին իրաւարութիւնը յառաջ չի բերէ , այն ատեն Թրըսթին - որ չի կրնար անդործածելի թողուլ Թրըսթին եկամուտները որ որոշ նպատակներու յատկացուած են - անկ պիտի ըլլայ յառաջ բերել իրաւարարութիւնը , նշանակելու համար այն հայկական ընկերակցութիւնը կամ

հաստատութիւնը կամ կաղմակերպութիւնը , որուն ոկտոք է Թրըսթին (Trustee) յանձնէ Թրըսթին տարեկան եկամուտները :

Երկու պարագային մէջ ալ իրաւարարական վճիռը վերջնական եւ անվերաքննելի պիտի ըլլայ , եւ ծախքերն ալ Թրըսթին կողմէ պիտի հոգացուին :

————— *

Ներկայ Կանոնագրին մէջ կատարուած փոփոխութիւնները 1924էն ասդին բուհարկուած են Միութեան Ընդհանուր Ժողովին կողմէ իր 18 նոյեմբեր 1925 , 19 նոյեմբեր 1926 , 18 նոյեմբեր 1927 , 19 Հոկտեմբեր 1928 , 11 Յուլիս 1930 , 16 Սեպտեմբեր 1932 եւ 22 Սեպտեմբեր 1933 թուական նիստերուն մէջ :



Գեղ. Տաղարան Մաթիկեան — Փարիզ

ՀՀ Ազգային գրադարան



NL0221757

43.093